ԼՐԱՏՈՒ

ԲԱԶՄԱՎԱՍՏԱԿ ԳԻՏՆԱԿԱՆԸ ԵՎ ՄԱՆԿԱՎԱՐԺԸ

(ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ծ. Պ. Աղայանի ծննդյան 70-ամյակը)

Լրացավ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, գիտության վաստակավոր գործիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ծատուր Պավելի Աղայանի ծննդյան 70 և գիտամանկավարժական գործունեության 40-ամյակը։

Կյանքի և գործունեության բեղմնավոր ուղի է անցել մեր սիրելի հոբելյարը։ Պատմական Արցախի ծնունդ, պատանեկան տարիներից ի վեր ազատատենչ պապերի և հայրերի հերոսապատումներով սնված ու ոգեշնչված երիտասարդն ընտրում է իր կյանքի ուղին՝ նվիրվում է պատմական գիտությանը։

Կիրովաբադի հայկական մանկավարժական տեխնիկումն ավարտելուց հետո նա ընդունվում և գերազանց առաջադիմությամբ ավարտում է Մոսկվայի Ն. Գ. Չերնիշևսկու անվան պատմափիլիսոփայական ինստիտուտը։ Այնուհետև երեք տարի սովորում է Լոմոնոսովի անվան համալսարանի ասպիրանտուրայում, 1941 թ. ՍՍՀՄ պատմության գծով պաշտպանում թեկնածուական դիսերտացիա։

1941—1948 թթ. Ծ. Աղայանն աշխատում է Բաքվի Վ. Ի. Լենինի անվան մանկավարժական ինստիտուտում որպես հայկական բաժնի պրոռեկտոր, Կիրովի անվան պետական համալսարանում՝ դոցենտ և Ադրբեջանական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում՝ ավագ գիտաշխատող և գիտքարտուղար։ 1948 թ. Մոսկվայի համալսարանում նա պաշտպանում է դոկտորական դիսերտացիա՝ «Գյուղացիական ռեֆորմը Ադրբեջանում» թեմայով, ստանում պատմական գիտությունների դոկտորի աստիճան և պրոֆեսորի կոչում։ Պրոֆ. Ծ. Աղայանի դոկտորական դիսերտացիան սովետական նշանավոր պատմաբաններ Ն. Մ. Դրուժինինը, պրոֆ. Ի. Պ. Պետրուշևսկին և ուրիշներ գնահատել են որպես արժեքավոր ներդրում Ադրբեջանի ագրարային հարաբերությունների պատմության ուսումնասիրման մեջ։ Այդ աշխատությունը գալիս էր նպաստելու ամբողջ Անդրկովկասի ագրարային-գյուղացիական հարցի համակողմանի ուսումնասիրությանը։

1948 թ. պրոֆ. Ս. Աղայանը տեղափոխվում է Երևան և աշխատանքի անցնում Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում որպես սովետական հասարակարգի պատմության բաժնի վարիչ։ Նրա ղեկավարությամբ լուրջ քայլեր են կատարվում Սովետական Հայաստանի պատմության մարքսիստական մշակման ուղղությամբ, երևան են դալիս առաջին կոլեկտիվ աշխատությունները։

1950 թ. Ս. Աղայանն ընտրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից անդամ։ 1950—1951 թթ. աշխատում է որպես մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի դիրեկտորի տեղակալ, 1951—1954 թթ.՝ ՀԿԿ Կենտկոմի գիտության ու կուլտուրայի բաժնի վարիչ, 1954—1960 թթ.՝ պատմության ինստիտուտում՝ նոր պատմության բաժնի վարիչ, 1961—1968 թթ.՝ Մլի-ի հայկական մասնաճյուղի դիրեկտոր։ 1968 թ. Ս. Աղայանն ընտրվում է ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս, հասարակագիտական բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար։ 1968—1973 թթ. խմբագրում է «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագիրը, 1973—1980 թթ. ղեկավարում պատմության ինստիտուտի նոր պատմության բաժինը, իսկ 1980 թ. առայսօր համալսարանի ՍՄԿԿ պատմության ամբիոնը։

Պրոֆ. Ս. Աղայանն օժտված է գիտական աշխատանք կազմակերպելու և ղեկավարելու բարձր ունակություններով։ Սակայն նրա տարերքն ամենից ավելի դրսևորվում է գիտահետազոտական աշխատանքի բնագավառում։ Նա հայ ժողովրդի պատմության նոր և նորագույն շրջանի լավագույն հետազոտողներից մեկն է։ Լայնորեն հայտնի են նրա աշխատությունները Հայաստանի և Անդրկովկասի բանվորագյուղացիական հեղափոխական շարժումների, հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի, հասարակական-քաղաքական հոսանքների, Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության, Անդրկովկասի ժողովուրդների դարավոր բարեկամության, ականավոր հայ հեղափոխական գործիչների և բազմաթիվ այլ հանգուցային հարցերի վերաբերյալ։

1955 թ. լույս տեսավ Ս. Աղայանի «Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ.» մենագրությունը, որը կարևոր ներդրում էր հեղափոխական շարժումների պատմության մեջ։ Ռուսական առաջին հեղափոխության ընդհանուր ֆոնի վրա հեղինակը վեր է հանել Հայաստանի և Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների պայքարը ցարիզմի և բուրժուազիայի դեմ, ցույց տվել այդ պայքարի դասակարգային բովանդակությունն ու ինտերնացիոնալ բնույթը։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության դերն ու նշանակությունը հայ ժողովրդի ազգային և սոցիալական ազատագրության գործում, Հայաստանում սովետական կարգերի հաստատման պատմությունը հանգամանորեն լուսաբանված են Ս. Աղայանի «Հոկտեմբերյան հեղափոխությունը և հայ ժողովրդի ազատագրությունը» (1957 թ.), «Մեծ հոկտեմբերը և Հայաստանի աշխատավորների պայքարը սովետական իշխանության համար» (1962 թ., ռուսերեն), «Սովետական կարգերի հաստատումը Հայաստանում հայ ժողովրդի վերածնունդն է» (1981 թ., ռուսերեն) արժեքավոր աշխատություններում։

Սովետական կարգերի հաստատման վերաբերյալ նրա ուշագրավ գործերից էր նաև «Վ. Ի. Լենինը և Անդրկովկասի սովետական հանրապետությունների ստեղծումը» (1976 թ.) մենագրությունը։ Ինչպես իր մյուս, այնպես էլ սույն աշխատության մեջ, հեղինակը փաստական հարուստ նյութերի համակողմանի քննությամբ ցույց է տալիս հեղափոխական և հակահեղափոխական ուժերի գոտեմարտերը, նորովի լուսաբանում 1917—1918 թթ. Անդրկովկասում ստեղծված հեղափոխական իրադարձության հարցը, ըստ արժանվույն գնահատում Հոկտեմբերյան հեղափոխության և մեծ Լենինի դերը Անդրկովկասի ժողովուրդների ազատագրության գործում, վեր հանում երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունների, բանվորների և կոմունիստ գործիչների պայքարը ներքին և արտաքին հակահեղափոխական ուժերի դեմ և այլն։

Ակադեմիկոս Ս. Աղայանի գիտական հետաքրքրությունների կարևոր բնագավառներից մեկն էլ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի պատմությունն է։ Իր երկարատև ու տքնաջան աշխատանքի շնորհիվ նա գրեց «Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից» մեծածավալ (871 էջ) արժեքավոր մենագրությունը (1976 թ.), որտեղ բարձրացրեց, վերլուծեց ու գնահատեց շրջանցված, ստվերի տակ թողնված մի շարք հարցեր, հարստացրեց և մի նոր աստիճանի բարձրացրեց մեր ազգային-ազատագրական պայքարի, ժողովրդի ազատասեր ու հայրենասեր զավակների հերոսական սխրագործությունների պատմության լուսաբանումը։

Օսմանյան բռնակալության ծանր լծի տակ հեծող արևմտահայությունը դարեր շարունակ մաքառում էր իր ազատության ու անկախության, ֆիզիկական գոյության փրկության համար։ Այդ պայքարն արդարացի և առաջադիմական պայքար էր՝ ուղղված օսմանյան ռազմաֆեոդալական դեսպոտիզմի դեմ։ Ելնելով մարքս-լենինյան մեթոդոլոգիական դիրքերից, հեղինակը հանգամանորեն քննում է հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի սոցիալ-տնտեսական և իրավաքաղաքական պատճառները, նրա զարգացման էտապները, ժողովրդի մեջ տարերայնորեն ծագած հայդուկային շարժումը, այդ շարժման պարագլուխների կյանքի ու գործունեության հերոսական դրվագները, բացահայտում դրանց դերն ու նշանակությունը։ Այս կապակցությամբ չի կարելի չնշել սույն աշխատության ըստամենայնի ուշագրավ այն ընդարձակ բաժինները, որոնք նվիրված են ժողովրդական հերոս, մեծ հայրենասեր Անդրանիկի կյանքի ու գործունեության պատմությանը։ Սովետահայ պատմագիտության մեջ առաջին անգամն էր, որ փաստական հարուստ նյութերի հիման վրա ուրվագծվում էր ժողովրդի ազատության ու անկախության գործին ու գաղափարին անսահմանորեն նվիրված հերոսի պատկերը։ Դա մեծ ապտակ էր հայ ժողովրդի ազատագրական մաքառումների պատմության կեղծարարներին։ Պրոֆ. Աղայանի այդ աշխատությունը խոշոր ներդրում է հայ ազատագրական պայքարի պատմության ուսումնասիրության մեջ։

Ս. Աղայանն առաջինն էր, որ պատմական լայն ֆոնի վրա ուսումնասիրեց և ընդհանրացված ձևով շարադրեց Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների դարավոր բարեկամության պատմությունը։ 1961 թ. լույս տեսավ նրա «Հայ և ադրբեջանական ժողովուրդների դարավոր բարեկամությունը», իսկ 1970—1980 թթ.՝ «Անդրկովկասի ժողովուրդների դարավոր բարեկամությունը» չորս մասից բաղկացած ռուսերեն աշխատությունը։ Ակնհայտ է հե-

դինակի ծառայությունը Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության, նրանց ինտերնացիոնալ կապերի ամրապնդման շնորհակալ գործին։ Պատահական չէ, որ այդ աշխատությունը ջերմորեն ընդունվեց և բարձր գնահատվեց նաև Ադրբեջանի ու Վրաստանի պատմաբանների և լայն ընթերցողների կողմից։

Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Ծ. Աղայանի «Ռուսաստանի դերը հայ ժողովրդի պատմական ճակատագրում» (1978 թ., Մոսկվա) մենագրությունը, որ գալիս էր մի նոր աղյուս դնելու հայ-ռուսական հարաբերությունների հարուստ պատմագրության շենքին։ Հեղինակը փաստական տվյալների հիման վրա խոսում է հայերի ռուսական կողմնորոշման նախադրյալների, հայ-ռուսական տնտեսական, կուլտուրական և քաղաքական կապերի մասին, վեր հանում Ռուսաստանի առաջադիմական դերը Արևելյան Հայաստանի միացման ու նրա հետագա զարգացման գործում և այլն։ Նա անդրադառնում է Կովկաս աքսորված դեկաբրիստների գործունեությանը և առանձնապես ընդգծում հայ ժողովրդի մեծ բարեկամ Ա. Ս. Գրիբոյեդովի դերը Ռուսաստանի հետ Արևելյան Հայաստանի միացման, ցիրուցան արված հայ ժողովրդի հավաքման ու համախմբման, նրա տնտեսական ու կուլտուրական հետագա զարգացման ասպարեզում։

Պրոֆ. Աղայանը Հայաստանի և Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների պատմության ուրվագծերի հեղինակներից և խմբագիրներից մեկն է։ Նա «Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական նշանակությունը» երկու ստվար հատորների և մի շարք ուրիշ ժողովածուների կազմողներից ու խմբագիրներից է։ Նա ակտիվ մասնակցություն է ունեցել ՍՍՀՄ պատմության բազմահատորյակի և հայ ժողովրդի պատմության 8 հատորյակի աշխատանքներին, վերջինիս համար գրել է առանձին բաժիններ, առաջաբաններ, խնամքով կատարել 5, 6, 7 ծավալուն հատորների պատասխանատու խմբագրի բարդ ու դժվարին աշխատանքները։

Հարուստ է ու բեղմնավոր պրոֆ. Աղայանի մանկավարժական գործունեությունը։ Ավելի քան 40 տարի նա դասախոսական աշխատանք է կատարել Ադրբեջանի պետական համալսարանում և մանկավարժական ինստիտուտում, Երևանի մանկավարժական ինստիտուտում և պետական համալսարանում, դասախոսել է ՍՍՀՄ, կուսակցության և հայ ժողովրդի պատմություն, տարիներ շարունակ եղել է կուսպատմության ամբիոնի վարիչ։ Ծ. Աղայանը ղեկավարել է մոտ 50 ասպիրանտ, որոնցից շատերը ներկայումս գիտության դոկտոր-պրոֆեսորներ ու թեկնածուներ են, աշխատում են գիտության ու մանկավարժության ասպարեզում, պետական և կուսակցական մարմիններում։ Նա քանիցս մասնակցել է պատմաբանների միջազգային կոնգրեսներին՝ Սիրիայում, Լիբանանում, Ֆրանսիայում, ԳՖՀ-ում, Թուրքիայում, Չեխոսլովակիայում, Բուլղարիայում, հանդես եկել զեկուցումներով։

Կուսակցությունը և կառավարությունը բարձր են գնահատել պրոֆ. Աղայանի գիտամանկավարժական և հասարակական-քաղաքական աշխատանքը։ Նա պարգևատրվել է Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով, մի շարք մեդալներով ու պատվոգրերով, գիտության վաստակավոր գործչի կոչումով։

Վաստակաշատ գիտնականի և մանկավարժի կյանքն ու գործունեությունը ամբողջությամբ նվիրված է կոմունիստական կուսակցության ու սովետական ժողովրդի մեծ գործին։ Իրեն հատուկ աշխատասիրությամբ ու եռանդով նա անդադրում աշխատում է և չանք չի խնայում սովետական գիտության զարգացման, երիտասարդ կադրերի պատրաստման համար։ Ցանկանք նրան քաջառողջություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ։

ՎԱՐԴԱՆ ՊԱՐՍԱՄՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՍԻՐՆԼԻ ՀՈԲԵԼՅԱՐ.

Սրտագին ողջունում ենք Ձեզ՝ ականավոր պատմաբանիդ, սովետահայ պատմագիտության վաստակաշատ ներկայացուցչիդ, մեր ամսագրի խմբագրական կոլեգիայի բազմամյա անդամիդ, Ձեր ծննդյան 70-ամյակի առթիվ: Մաղթում ենք Ձեզ քաջառողջություն, երկարամյա կյանք և ստեղծագործական նորանոր հաջողություններ:

«ԼՐԱՐԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ»
ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ